

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ

Սեպտեմբերի 25-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճն էին հավաքվել գրողներ, մշակույթի գործիչներ, բանվորներ, ծառայողներ, սովորողներ, հյուրեր երկրի տարբեր հանրապետություններից, արտասահմանյան երկրներից՝ մասնակցելու Ե. Չարենցի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

Իր մեծ դիմանկարով, որը երևում է բեմի խորքից, թվում է, թե այդ հանդիսությանը մասնակից է նաև ինքը՝ բանաստեղծը:

Նիստը ներածական խոսքով բաց է անում կառավարական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանը:

Նա համառոտակի ներկայացնում է մեծ երգչի դիմանկարը, նրա անցած ստեղծագործական ուղին:

Թեև անցել են տասնյակ տարիներ այն ժամանակներից, երբ կերտվել են այդ ստեղծագործությունները, սակայն նրանք այսօր էլ համահնչուն են մեր կյանքին, որովհետև գրված են մեծ ավյունով, մեծ կյանքով և խոր զգացմունքներով:

Իր խոսքի վերջում Ն. Հարությունյանը ասում է.

— Եղիշե Չարենցի հանճարը մոռացության հանգրվան չունի, որովհետև նա արհամարհում է ժամանակի և տարածության ամենակուլ ուժը: Թո՛ղ նրա հրդեհված սրտի անշեջ կրակը հավերժ վառվի բոլոր սերունդների սրտերում:

Այնուհետև, զեկուցման համար խոսքը տրվում է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար Պարույր Սևակին:

Զեկուցողը հանգամանորեն խոսում է բանաստեղծի կյանքի ու գրական գործունեության մասին:

Բացի հայ գրողներից և արվեստագետներից, մեծ բանաստեղծի և հայ ժողովրդի հասցեին ջերմ և սրտագին խոսքեր ասացին նաև հյուրաբար երեկոյին ներկա գտնվող Միության հանրապետությունների և արտասահմանյան բազմաթիվ երկրների ներկայացուցիչները:

Հանդիսավոր նիստին ներկա էր նաև Ամենայն Հայոց Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով և ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Լիբանանից, Եգիպտոսից և այլ երկրներից ս. Էջմիածին ուխտի եկած հյուրերով:

Հանդիսության վերջում տրվում է ճոխ համերգ՝ հանրապետության կատարողական լավագույն ուժերի մասնակցությամբ:

Համերգին իր մասնակցությունը բերեց նաև Մետրոպոլիտենի հանրահայտ երգչուհի Լիլի Զուքասզյանը:

Նույն օրը, առավոտյան ժամը 11-ին, տեղի ունեցավ Եղիշե Չարենցի արձանի հանդիսավոր հիմնադրումը: Մոտ ապագայում այն վեր կխոյանա այն տեղում, ուր միախառնվել են Սայաթ-Նովայի, Լերմոնտովի և Չարենցի անունները կրող փողոցները: